ԱԴՐԲԵՋԱՆԻ ՎԵՐՋԻՆ ՓՈՐՁԱՔԱՐԸ

Ինչպէ՞ս կը պատասխանի Ռուսաստանը

Ս. Էվոյեան

1999 թ. Փետրուարին, երբ Ադրբեջանի նախագահ Հէյդար Ալիեւը «առողջական» վիճակի վատթարացման պատճառաբանութեամբ գտնւում էր Թուրքիայի ռազմական հիւանդանոցում, Բաքուում, նրա արտաքին յարաբերութիւնների հարցերով պետխորհրդական Վաֆա Գուլուզադէն հանդէս եկաւ յայտարարութեամբ, ըստ որի Ադրբեջանում կարող են տեղակայուել ամերիկեան կամ ՆԱՏՕի ռազմական յենակէտեր, ինչպէս ասենք, թուրքական Ինջիլիքում:

Յայտարարութեանը հետեւած մեկնաբանութիւնների եւ իրադարձութիւնների տրամաբանութիւնը այսօր յուշում է, որ Ա.Մ.Ն.ի, ՆԱՏՕի կամ Թուրքիայի զօրամիաւորումների յայտնութեան հեռանկարը ադրբեջանական տարածքում ոչ թէ որեւէ պետական գործչի կամ քաղաքական ուժի կամքի արտայայտութիւնն է, այլ՝ հեռագնայ ռազմավարութեան ծրագրային մի օղակ, որի իրագործումը կախուած կը լինի հետագայ զարգացումներից եւ կոչուած՝ փոխելու ռազմաքաղաքական կացութիւնը տարածաշրջանում:

Ուշագրաւ է, որ Վ. Գուլուզադէի յայտարարութեանը յաջորդեց երկրի առաջին փոխ-վարչապետ Աբբաս Աբբասովի հարցազրոյցի հրապարակումը «**Նեզավիսիմայա Գազետա**» (24.02.99) ռուսաստանեան օրաթերթում, որտեղ հիմնականում արծարծւում էր ռուս-ադրբեջանական միջ-պետական յարաբերութիւնների հիմնախնդիրների թեման: Ընդ որում, երկկողմանի յարաբերութիւնների բարելաւման հեռանկարը առաջին փոխ-վարչապետը կապում է Ռուսաստանի կողմից իրենց առաջադրած որոշ նախապայմանների կատարման հետ: Մասնաւորապէս՝

ա.- Վերաբննել Ռ.Դ.-ից Հայաստանին փոխանցուած 1 մլրդ դոլար արժողութեամբ զէնքի հարցը.

բ.- Վերանայել Ռ.Դ.-Հայաստան համագործակցութեան պայմանագրի ռազմական ոլորտին վերաբերող մասը եւ առհասարակ ռուսաստանեան քաղաքականութիւնը տարածաշրջանում՝ ռազմավարական դաշնակցին ճնշելու առումով: Հակառակ պարագայում Ադրբեջանը դիւանագիտօրէն սպառնում է խթանել Վրաստան-Ուկրաինա-Ադրբեջան-Մոլդովա առանցքի կազմաւորման գործընթացը, բարձրացնել Ադրբեջանում տեղակայուած ռազմավարական նշանակութեան Գաբալինեան ռադիոլոկացիոն կայանի խնդիրն ի վնաս Ռուսաստանի, այլեւս չստորագրել Ա.Պ.Հ. «Կոլեկտիւ անվտանգութեան» պայմանագիրը եւ իրաւունք վերապահել այլ երկրների հետ ռազմական համագործակցութիւնը ամրապնդելուն: Հարկ է ընդգծել մի հանգամանք, որ պարզաբանում է Ադրբեջանի քաղաքականութեան առանցքային հիմնախնդիրը Ռուսաստանի հետ յարաբերութիւններում:

«Ադրբեջանը կնքել է «Կոլեկտիւ անվտանգութեան մասին» պայմանագիրը 1993 թ. եւ վաւերացրել է 1994 թ.՝ յուսալով եւ սպասելով համարժէք քայլերի: Այդպիսիք չեղան, Ռուսաստանի որոշակի շրջանակներ որդեգրեցին միանշանակօրէն հայամէտ դիրքորոշում», ասւում է հարցազրոյցում:

Ադրբեջանի առաջին փոխ-վարչապետի խօսքը կարելի էր համարել Վաֆա Գուլուզադէի չափազանց բացորոշ յայտարարութեան դիւանագիտական պարզաբանում, սակայն յաջորդ օրն իսկ Ադրբեջանի պաշտպանութեան նախարար, գեներալ-գնդապետ Սաֆար Աբիեւը հաստատեց Ադրբեջանում Թուրքիայի, ՆԱՏՕի կամ Ա.Մ.Ն.ի ռազմակայանների տեղակայման հնարաւորութիւնը՝ արտայայտելով ղեկավարութեան պաշտօնական տեսակէտը: Միաժամանակ, նա հաստատում է բոլոր այն հակաքայլերը, որոնք նշուել էին փոխ-վարչապետի խօսքում:

Յատկանշական է, որ անդրադառնալով այդ խնդրին՝ ռուսաստանեան մեկնաբանները նշել էին երկու կէտ՝ Գաբալինեան կայանի գործունէութիւնը կը խոչընդոտի ՆԱՏՕի ռազմակայանների ռադարային համակարգի աշխատանքը եւ հնարաւոր է, որ Համաշխարհային Դրամատունը Ռուսաստանի պարտքային հարցերը կարգաւորելու եւ վարկեր տրամադրելու դիմաց կարող է պահանջել նոյն այդ կայանի փակումը:

Նշեալ սպառնալիքը Մոսկուայի կողմից ընկալւում է իբրեւ յետ-խորհրդային տարածքի հարաւում Արեւմուտքի կողմից հաստատուելու ռազմավարական ծրագրի իրականացում: Բաքուն, իր հերթին, ենթադրելով, որ ինչպէս Մոսկուան, այնպէս էլ Թեհրանը հակաքայլեր կը ձեռնարկեն, որոշում ընդունեց նախագահի ենթակայութեան ներքոյ ստեղծել ռազմական հակահետախուզութիւն:

Փետրուարի 25ին Ադրբեջանում Ա.Մ.Ն. պաշտպանութեան նախարարութեան պատուիրակութիւնը՝ Պենտագոնի ծրագրի ղեկավար Ջ. Վոն Քոնուէյի գլխաւորութեամբ, սկսեց զանգուածային ոչնչացման զէնքի չտարածման ոլորտում համագործակցութեան ծրագրի իրականացումը, որը նախատեսում է, այսպէս կոչուած, քրէական հետախուզութեան ստեղծումը Ադրբեջանի մաքսային համակարգում:

Ըստ ադրբեջանական աղբիւրների, այդ քայլն ուղղուած է կասեցնելու Ռուսաստան-Իրան երթուղով ռադիօ-ակտիւ նիւթերի փոխանակումը: Միաժամանակ, նշւում է, որ ամերիկեան ղեկավարութեան այս նախաձեռնութիւնը, հակառակ 907րդ յօդուածի արգելքին, շարունակութիւն կ՝ունենայ:

Եւս օրեր անց իսրայէլեան «**Ե-դիոտ Ահարոնոտ**» թերթի հրապարակումից յայտնի դարձաւ, որ Իսրայէլը պատրաստւում է Ադրբեջանում տեղակայել ռադարային կայաններ՝ Իրանից արձակուող հրթիռներին հետեւելու նպատակով: Ադրբեջանական լրատուամիջոցները դրական շեշտադրութեամբ այս տեղեկատուութիւնը հիմնաւորեցին երկու երկրների շահերի համատեղմամբ՝ կանխատեսելով գործընկերութիւն ռազմավարական ոլորտում:

Իսկ պետխորհրդական Վաֆա Գուլուզադէն հանդէս եկաւ ընդարձակ խօսքով, որտեղ ադրբեջանական այս նոր խաղերը փորձեց հիմնաւորել Ռուսաստանի կողմից հովանաւորուող հայկական «ագրեսի»ան դիմակայելու պարտադրանքով՝ գրեթէ կրկնելով յայտնի փաստարկներն ու սպառնալիքները:

«Երբ Ե. Պրիմակովը դարձաւ Ռ.Դ. արտգործնախարար, առաջարկեց Ադրբեջանի եւ Ղարաբաղի միջեւ ուղղակի բանակցութիւններ սկսելու գաղափարը: Քաղաքական տեսանկիւնից դա նշանակում է ինքնիշխան պետութեան եւ նրա ենթակայի միջեւ իրաւահաւասարութիւն: Այդ գաղափարը խաթարեց խաղաղարար ջանքերը... այժմ Ղարաբաղը գործնականում բռնազաւթուած է եւ միացուած Հայաստանին: Ահա թէ ո՞րն է ռուս-ադրբեջանական յարաբերութիւնների հիմնախնդիրը»,- ընդգծեց Հ. Ալիեւի գլխաւոր խորհրդականը:

Վերոշարադրեալ փաստերը, ինչպէս նաեւ Վ. Գուլուզադէի առաջին յայտարարութեանը յաջորդած իրադարձութիւնները ցոյց տուեցին, որ Ադրբեջանում թուրքական կամ ՆԱՏՕական ռազմակայաններ տեղակայելու գաղափարը հիմնաւորելու համար որպէս պատրուակ օգտագործւում է Հայաստանից բխող ռազմական սպառնալիքը դիմագրաւելու, տարածաշրջանում ուժերի յարաբերակցութիւնը հաւասարակշռելու եւ, որ էական է՝ Լ.Ղ. հիմնախնդիրը համաձայն ադրբեջանական շահերի լուծելու անհրաժեշտութիւնը:

Այս ողջ պատմութիւնը կարելի է գնահատել որպէս ադրբեջանական դիւանագիտութեան կողմից ռուսաստանեան ներկայիս բարդ նեղ-քաղաքական կացութիւնը օգտագործելով շանտաժի քաղաքականութիւն՝ յօգուտ ադրբեջանական շահերի: Բայց գոյութիւն ունեն այլ փաստեր եւս, որոնք պարտադրում են այլ դիտանկիւնից գնահատել իրավիճակը:

1999 թ. Յունուարին, ըստ ադրբեջանական վիճակագրական տուեալների, Համախառն Ներքին Արդիւնքի աճի կշռոյթը նուազել է 2 անգամ, մետաղագործական արդիւնաբերութիւնը կրճատուել է 42,3 տոկոսով, գրեթէ դադարել է շինարարութիւնը: Այսպէս, դադարեցուել է Landmark-2 ծրագիրը յայտնի «Լուկոյլ» միաւորման կողմից, «Azersun-Holding» թուրքական ընկերութիւնը հրաժարուել է 300 մլն. դոլար արժողութեամբ շինարարական ծրագրերից եւ այլն:

Միաժամանակ, 1999 թ. Յունուարին շետակիօրէն սրուել է գործարարական խնդիրը. աշխատանքը զրկուեցան խնդիրը. աշխատանքը կորցրել է աւելի քան 40 հազար մարդ: Աւելի՛ն, սկսուել է աշխատատեղերի կրճատման եւ աշխատավարձերի երկարատեւ չվճարման գործընթացը նոյնիսկ մասնաւոր արտերկրեայ ձեռնարկ-հիմնարկութիւններում: Ընդ որում, դա վերաբերում է ոչ միայն քարիւղի արդիւնաբերութեան ոլորտին առընչուող ընկերութիւնների ասպարէզից հեռանալուն, ինչպէս, օրինակ, «Բնիոն Թեքսիս»ի ներկայացուցչութիւնը, այնպէս էլ երկաթուղու վարչութեանը, «Ազերներժի» եւ «ԳՆԿԱՐ» խոշոր հաստատութիւններին:

Եւս մէկ փաստ. միայն Բաքուում աւելի քան 200 տեղական եւ արտերկրեայ մասնաւոր կառոյցներ դադարեցրել են իրենց գործունէութիւնը կամ էապէս կրճատել հաստիքները: Ադրբեջանական աղբիւրների համաձայն, միայն Բաքուում գործազուրկների իրական թիւը կազմում է 350-400 հազար մարդ, ինչը գումարելով տնտեսական կառուցուածքային ճգնաժամին կարող է ընկերային պայթիւնի պատճառ դառնալ: «1999 թ. սեւ Յունուար»՝ այսպէս են անուանում տարեսկիզբը Ադրբեջանում:

Համադրելով վերոշարադրեալ փաստերը՝ դժուար չէ նկատել, որ տնտեսական սուր ճգնաժամը՝ ուղեկցուող գործազրկութեան կտրուկ աճով, նախորդում է Ադրբեջանի բարձրագոյն ղեկավարութեան քաղաքական յայտարարութիւններին եւ նախաձեռնութիւններին: Միաժամանակ, օտարերկրեայ հաստատութիւնների գործունէութեան անբաւոյց սառեցումը Ադրբեջանում յուշում է այդ երկրի տարածքում որեւէ իրական ձեռնարկի անշահութաբերութեան մասին նրան լաւատեղեակութեանը:

Սոյն լաւատեղեակութեան հանգամանքը եւ քաղաքական յայտարարութիւններում բացայայտ ռազմական բնագաւառի գերակայութիւնը թոյլ է տալիս ենթադրել, որ հասունանում է ռազմավարական շահերի շրջանակներում ռազմաքաղաքական դաշնակիցների ու առաջնահերթութիւնների ճշտման պահը: ■